600.0043.14.02.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2018 թվականի №43Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի №40Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 2-ի №339Ն որոշումը և հաշվի առնելով «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հունվարի 15-ի և հունվարի 16-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 16-ի «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերությանը Վրաստան էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման լիցենզիա տրամադրելու մասին» №40Ա որոշմամբ «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված Վրաստան էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման ԼԷ №0598 լիցենզիայի գործողության ժամկետը՝ որոշման մեջ «մինչև 2018 թվականի փետրվարի 16-ը» բառերը փոխարինելով «մինչև 2019 թվականի փետրվարի 16-ը» բառերով:

2. «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել հինգ հարյուր հազար

դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2019 թվականի մարտի 16-ը գործողության ժամկետով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի փետրվարի 16-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
14 փետրվարի 2018թ.